

ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ
Համայնքի ղեկավար Հ. Ավետիսյան
2018թ. տարեկան կատարած աշխատանքների
Հաշվետվություն
30.01.2019թ.-ին տեղի ունեցավ Երվանդաշատ համայնքի ղեկավար
Հ. Ավետիսյանի 2018թ տարեկան հաշվետվությունը`

Մասնակցությամբ` համայնքի ավագանու և համայնքի բնակիչների .
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության
Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական ենթաօրենսդրական
ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական
ակտերի մասին>>, ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի,
ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող
հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն
վերապահված իրավասությունների շրջանակներում` իր
լիազորությունները: 2018թ. համայնքի աշխատանքային ծրագրի հիմքում
դրված են եղել գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա
ուղղությունները: Հիմնական նպատակը` համայնքի բնակչության
կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին
սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ
անհրաժեշտություն է եղել լուծելու 2018թ. ընթացքում: Այդ խնդիրների
լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի
մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու
ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն
աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում
արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների
ներկայացնում են Ձեզ:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելու
առումով աջակցել են ոռոգման համակարգի վերանորոգման

աշխատանքներին: Ոռոգման ջրամատակարարման խնդիրներ եղած
ժամանակ կարգավորել են անմիջապես ջրբախշներին օգնելով:

Գյուղատնտեսական տեխնիկայի համար նախապես ձեռք է բերվել
պահեստամասեր, աշխատանքների անխափան կազմակերպման համար:
Ընթացիկ տարվա խոտհունձի, հակավորման և ամբարման աշխատանքները
ժամանակին կատարելու համար, աջակցել են վառելանյութով և
պահեստամասերով:

Հետևել են գյուղ կենդանիների պրոֆիլակտիկ միջոցառումների
անթերի կատարմանը: Առավել կարևոր միջոցառումների անցկացմանը
և կազմակերպմանը մասնակցել են նաև գյուղապետարանի
աշխատակիցները: Հատկապես արյան անալիզների համար խոշոր
եղջերավոր կենդանիներից արյուն վերցնելու աշխատանքներին
մասնակցել և օգնել են գյուղապետարանի աշխատակիցները:

Քաղաքացիների ընդունելությունը կատարվում է սահմանված կարգով,
ուշադրությամբ լսում են ամենքին , քննարկում առաջ քաշած հարցերը

և առաջարկությունները, ընդունում դիմումները և բողոքները, օրենքի սահմաններում ձեռնարկում են միջոցներ, հարցերին լուծում տալու համար:

Ֆինանսների բնագավառում կատարել են հետևյալ աշխատանքները՝
 Հաշվետու ժամանակահատվածում եռամսյա հաշվետվություններ են ներկայացրել համայնքի ավագանուն: Վերահսկել են համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման գործընթացը:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել են հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները: 2018-թ-ի ընթացքում մուտքագրվել է՝

ՃԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ 27.12.2018թ. դրությամբ

2018թ. հավաքագրվել է եկամուտներ՝

Հազար դրամ

N	Անվանումը	Տարեկան պլան	2018թ, տարեկան	Կատարողական %
			փաստացի	Տարեկան
1	Հողի հարկ	3500,0	4083,7	116,7
2	Գույքահարկ	1742,8.0	2145,8	123,1
3	Տեղական տուրք	16,0	16,0	100
	պետական տուրք	-	-	-
4	Այլ ոչ հարկային եկամուտ	809,4	812,9	100,4
5	Տեղական վճար ադրահություն և ինքնակամ կառ շենք շին օինականացում	361,0	506,1	140,2
6	Պետ.բյուջեից տրամադրվող դոտացիա	11615,8.8	11615,8.8	100
	Պ/Բ տրամադրվող.այլ	0	0	0
7	Ֆոնդային բյուջե	3435,6	3435,6	100.0
8	Պահուստային հող. վարձ.	700,0	530,0	75,7
9	Այլ գույքի վարձակալություն	480,0	440,0	91,6
	Ընդամենը վարչական բյուջե	19225,0	20150,4	104,8
	Ընդամենը եկամուտներ	19225,0	20150,4	104.8
10	Հողի օտարումից մուտքեր		1426,6	-
11	Տարեսկզբի ազատ մնացորդ	3435,6	3435,6	100.0

Ընդամենը	22660,6	23586,0	104,1
----------	---------	---------	-------

27.12.2018թ դրությամբ

		2018թ. Տարեկան		Հազար դրամ
				Կատարողական % տարեկան
N	Ծախսերի անվանումը	Պլան տարեկան	փաստացի	
1	Տեղական ինքնակառավարում	14266,0	12931,9	90,6
2	Համայնքի այլ ծառ.	485,0	135,7	30,0
3	Աղբահանություն	1000,0	1000,0	100,0
4	Փողոցների լուսավորում	900,0	892,0	99,1
5	Կապիտալ նորոգման ծախսեր	1870,0	1858,9	99,4
6	Ջրամատակարարում	794,0	500,0	62,8
7	Ընդ. Բնույթի այլ ծառ.	1000,0	496,4	49,6
8	Գյուղատնտեսություն	200,0	185,0	92,5
9	Վարչական սարքավորումներ	992,6	992,6	100
10	Պահուստային ֆոնդ	1153,0	-	---
11	Ոչ ֆինանսական ակտիվներ		-1426,6	
Ընդամենը		22660,6	17565,8	77,5

Հասարակական կարգի բնագավառում, համագործակցում եմ ոստիկանության աշխատակիցների հետ: Կա փոխհամագործակցում աշխատանքների կազմակերպման գործընթացում:
Անձնագրային սեղանի պետի հետ մշտապես առկա է փոխադարձ տեղեկատվություն բնակիչների ներհուքի, արտահուքի, ժամանակավոր բացակայողների վերաբերյալ:

Պաշտպանության բնագավառում կատարել են հետևյալ աշխատանքները՝
Աջակցել են զորակոչի կազմակերպչական աշխատանքներին,
ժամանակին ներկայացրել զորակոչիկների անկետային տվյալները,
բնութագրերը , տեղեկանքները և այլն:

Մշտապես համագործակցում են գյուղի սահմանապահ ուղղակայի հետ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում,
բնակչության մեջ տարել են բացատրական աշխատանքներ «Ինքնակամ
շինությունների» կանխարգելման ու կասեցման վերաբերյալ:

2018 թվականի ընթացքում "SHTIGEN" ֆիրմայի աշխատակիցների կողմից
ավարտին են հասցրել և 50 բնակարաններին ապահովել արևային
ջրատաքացուցիչներով: Ժամանակին կատարում են շինությունների
հաշվառում, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն
ներկայացնում մարզպետարան:

Մարզպետարանից ստացած շրջաբերականների ինֆորմացիան
(բնակարանաշինության վերաբերյալ) հայտարարության միջոցով
իրազեկել են համայնքի բնակիչներին:

2018 թվականի ընթացքում հետևել են համայնքի փողոցները լուսավորող
անսարք լուսամփոփների վերանորոգմանը:

2018թվականի փետրվար-մարտ ամիսներին կատարվել է համայնքի խմելաջրի
ցանցի 3400 մետր կապիտալ վերանորոգում: Պարբերաբար կատարել են
խմելաջրի մանրէազերծում քլորացման եղանակով:

Պատշաճ մակարդակի է աղբաթափման աշխատանքները: Ամիսը չորս
անգամ կատարվում է աղբաթափման աշխատանքներ:

Յոթօգտագործման բնագավառում հետևել են համայնքի վարչական
սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման,
հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների
պահպանման նկատմամբ:

Տրանսպորտ - Սույն բնագավառում իրականացնում են պետության կողմից
պատվիրակված հետևյալ լիազորությունները:

Յետևում են համայնքային ենթակայության տակ գտնվող
ճանապարհների, կամուրջների ու ինժինեռական այլ կառույցների
պահպանմանը և շահագործմանը: 2018-թ ընթացքում հողալցման և
բետոնապատման եղանակով վերանորոգել են գյուղամիջյան
փողոցները, որոնք գտնվում էին անմխիթար վիճակում:

Համայնքի ավագանին բազմիցս ուղերձով դիմել է մարզպետին համայնք
մտնող ճանապարհի 5 կիլոմետրանոց ճանապարհատվածը կապիտալ
վերանորոգելու համար: Սակայն այդ ուղղությամբ երկար տարիներ է ոչ
մի աշխատանք չի կատարվում, որն առաջացնում է համայնքի
բնակիչների խստագույն դժգոհությունը, հատկապես բնամթերքը շուկա
հասցնելու ժամանակ՝ ճանապարհի անսարքության պատճառով
բնամթերքը ապրանքային տեսքը կորցնում է:

Առևտրի և սպասարկման բնագավառում վերահսկում են համայնքում
գործող մթերային խանութի և սնունդ արտադրող օբյեկտների
աշխատանքները: Յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվություններ են
ներկայացնում մարզպետարան հանրային սննդի և առևտրի օբյեկտների
վերաբերյալ:

Կրթության և մշակույթի բնագավառում, միշտ տեղեկացված եմ եղել այս բնագավառի խնդիրներին և տվել հրատապ լուծումներ: Աշխատանքներ եմ տանում կապ ստեղծել դպրոցի, բնակչության, մշակույթի տան և գրադարանի միջև, որն ինձ մասամբ հաջողվում է:

Առողջապահության բնագավառում հաճախակի խորհրդակցության եմ հրավիրում գյուղի առողջության կենտրոնի տնօրենին: Լսում եմ առաջ քաշված խնդիրները, քննարկում դրանք և տալիս համապատասխան լուծումներ:

Սոցիալապես անապահով խավերի համար աշխատում եմ ամեն ինչ անել նրանց պայմանների բարելավման համար:

Եթե աշխատատեղեր են բացվում, առաջնահերթ այդ ընտանիքների անդամներին եմ ապահովում աշխատանքով:

Ամփոփիչ խոսքով ուզում եմ ասել, որ իմ աշխատանքները նպատակամղված են Երվանդաշատ համայնքի բնակիչների ապրելակերպը բարեկեցիկ դարձնելուն, որը դանդաղ, սակայն հաստատուն քայլերով իրականանում է: